ԳՈՏԿԵՐԱՋՐԱԳ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
եւ յաւելած դաստիարակների համար
XV ՏԱՐԻ № 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1897 Թ.

Հրեշտակ

Թռչում է անվերջ
Անձեռ հրեշտակ
Մանկանց առ-
նում է
իր թեւերի տակ

Եւ լոկ նայեացքով
Ձեռքը իր կրծքին,
Նա միշտ պաշտ-
պան է
Երանց վատ կեան-
քին...

• ՍՐԻՆԴ



ՈՍԿԷ ԶԿՆԻԿԸ

I

Արի երեխէք, չըմռայլի ձեր հոգին,
Թող չըսևանայ ձեր սիրտը մատաղ!—
Սա Usrուկներիս պէս վէպ չէ դառ-
նագին,
Նրա պէս կըրուց արիւնաթաթախ։
Այն Ոսկէ Զկան մասին չեմ գըրում,
Որը ապրում էր մեծ ծովի ջրում,
Որին ծերունի ձկնորսը փրկեց,
Իր պատառ կըտոչ մեծ փառքի հասցրեց.
Իսկ յետոյ ագահ այդ չար պատառին
Ոսկէ Զկնիկը կրկեց բընաւին,
Իր տըւած փառքից, պատիւ-անունից...
Այդ յայտնի է ձեզ Պուշկինի գրքից։
Դէ հիմա տեսէք, մանուկներ փոքրիկ,
Թէ ինչեր արեց մեր Ոսկէ Զկնիկ!

II

Ծովի եղերքին ապրում էր հըզօր,
Բայց հիւանդացած, մի ծեր թագաւոր։
Հազար միջոցներ, բժիշկ ու դարման
Արքային բուժել չըկարողացան։
Եւ մի աստղաբաշխ ասաց արքային,
Որ եթէ որսան Ոսկէ Զկնիկին,
Նա նրան ցաւից կ'ազատի իսպառ
Ու էլ չի տանջվիլ այդպէս չարաչար։
Իսկոյն տրւեցաւ սաստիկ հըրաման,
Ծովի մէջ նետել բազմաթիւ ուռկան։
Եւ Ոսկէ Զկնիկ յանկարծ չողչողաց,
Արքայի որդու ցանցումը գերւած.
Նա աղաչում է մարդկային լեզւով
Ազատեն կրկին, գցեն նրան ծով։
Նա խոստանում է այդ բանի համար
Թանկագին վրկանք, բարիք անհամար։
Արքայորդին էլ խղճաց Զկնիկին
Ու նետեց ծովը, ազատեց կրկին։

III

Երբ արքայորդին ու ձկնորսները
Ծովն էին գցում իրանց ցանցերը,
Աստղաբաշխը նայեց աստղերին,
Իսկոյն գուշակեց, ասաց արքային.

„Հարազատ որդիդ, արքայ ողորմած,
Հէնց այն րոպէիս Զկնիկին որսաց,
Խղճացաւ նորան, դարձեալ ծով նետեց։“
Եւ հիւանդ արքան վշտագին դոչեց.
—„Ակ և ես որդի չունեմ ես իսպառ,
Աքսորէ՛ք նորան մի հեռու աշխարհ“!
Թագուհի մայրը արցունքը աչքին՝
Կանչեց իրա մօտ Թշւառ զաւակին,
Վերջին անգամը իր կրծքին սեղմեց,
Համբուրեց նրան ու ճանբան օրհնեց.
„Տէր ընդ քեզ, որդի! ուր էլ որ գընաս,
Վերջին խրատս դու չըմոռանաս —
Ընտրիր քեզ համար ընկեր այնպիսի,
Որ ամեն բարիք քեզ հետ միշտ կիսի,
Որ ամեն բանում լինի աջակից,
Անբաժան եղբայր, հալալ սըրտակից!“
Մայրը իր որդուն համբուրեց կրկին,
Լացեց ու տւեց հրաժեշտը վերջին։

IV

Արտաքսւած որդին տխուր ու տրտում՝
Թողեց հայրենիք, ընկաւ ճանապարհ.
Անցնում է ձորեր, գնում է, գնում
Ու վերջը հասնում մի օտար աշխարհ։
Մի ընկերի հետ այստեղ միասին
Ջըրոյց արեցին, ճաշի նստեցին։

Ընկերը կտրեց, հացը բաժանեց
Ու մեծ բաժինը իր առաջ դրեց։
Մօր խօսքը լիշեց արքայի որդին
Եւ իսկոյն ձգեց, թողեց ընկերին։
Արտաքսուած որդին դնում է մենակ,
Անցնում է ձորեր, հասնում մի քաղաք։
Մի ընկերի հետ այստեղ միասին
Զբոսյց արեցին, ճաշի նստեցին։
Ընկերը կիսեց, հացը բաժանեց
Ու հացի կէսը նրան մատուցեց։
Մօր խօսքը լիշեց արքայի որդին,
Իսկոյն ճանաչեց հալալ ընկերին։
Այս ընկերի հետ նա ջան ասելով
Անցնում է ձորեր, անցնում լեռ ու ծով,
Ու վերջը հասնում մի մայրաքաղաք,
Այստեղ երկուսով վարձում մի տընակ։
Դարձաւ ոսկերիչ ընկերն անբաժան,
Շինեց մատանիք, օղ, ապարանջան.
Արքայորդին էլ ամեն օր տանում
Ոսկէ իրերը՝ վաճառք էր հանում։

V

Ահա մի օր էլ արքայի որդին,
Երբ որ տարել էր ծախելու իրեր,
Լսեց մեծ աղմուկ փողոցի միջին—
Թէ այր և թէ կին, թէ մանուկ, թէ ծեր՝

Իրար հրելով, ամենքն էլ վազում,
Դէպի արքայի պալատն են դիմում։
Արքայորդին էլ երկմտութիւնից
Սկսեց գնալ ամբոխի յետքից։
Նա հասաւ պալատ և բակը մտաւ,
Գիտես, ընթերցող, թէ նա ինչ տեսաւ!—
Ամբոխը բակում իրար է անցնում,
Իրար խռնւում. իսկ պատշգամբում
Արքայադուստրն է լուռ ու մունջ նստած,
Նրա առաջ էլ մի տղայ կանգնած։
Երիտասարդը չանքեր է անում,
Շատ ճիգ է թափում, հնարք որոնում
Մի կերպ խօսացնի արքայադստեր,
Բանայ պապանձւած լեզուի կապանքները.
Թէ նա խօսացնի համր աղջկան,
Այնժամ կըդառնայ արքայի փեսան։
Սակայն ամեն չանք անցնում էր իզուր—
Աղջիկը դարձեալ համր էր ու լուռ...
Եւ թագաւորը, ըստ իր պայմանին,
Հրաման տւեց կախել խեղճ տղին։
Իսկոյն դահիճներն բռնեցին նրան
Ու քարշ տւեցին դէպի կախաղան։
Թշւառ պատանին գոչեց ողբագին,
Խորը սիս քաշեց, աւանդեց հոգին....

Մեր արքայորդին սարսափած վազեց,
Եկաւ, ընկերոջ բոլորը պատմեց։

VI

Ընկերը լսեց—և խորհրդաւոր
Ժպիտը խաղաց նրա երեսին։
Արքայի որդուն նա հետևեալ օր
Յայտնեց, որ ինքը այն չքնաղ կոյսին
Անշուշտ կըբուժի, լեզուն կըբանայ
Ու թագաւորին փեսայ կըդառնայ։
Ոսկերիչ ընկերն արքունիք գընաց,
Իր նպատակը արքային ասաց։
Նա առաջարկեց, որ մունջ աղջկան
Տանեն դահլիճը, իրանք հետանան.
Իսկ թագաւորը դռան յետևից
Ծածուկ թող դիտի և լսի դրսից։

VII

Եւ ոսկերիչը մտնում է հանդարտ
Դահլիճը գուգաած ու չքեղազարդ։
Ոսկէթել բարձին՝ լռիկ ու հեզիկ՝
Բազմած է չքնաղ արքայադստրիկ։
Մունջ դեղեցկուհուն նա գլուխ տւեց
Ու նրա նստած բարձին նա դիմեց.
„Օ! քանով տեսանք, դու բարձ ոսկէթել!“
Իսկ բարձըն ասաց. „բարով ես եկել“։

Աղքատադուստրը ճնաց զարմացած—
Նա իր կեանքումը երբէք չէր լսած,
Որ անչունչ բարձը կարող է խօսել,
Մարդու պէս ասել ու պատասխանել։
„Ա՛յ, արմանք-զարմանք!.. մեղայ Քեզ, Աստ-
ւած!“...
Դրսից ը աղքան ասում է ապշած։
Ոսկերիչն ասաց. „բարձ, գիտես՝ ինչ կայ?“
—„Ոչինչ չըգիտեմ, արևս վըկայ։“
Աղքատադուստրը ականջը սըրեց,
Ոսկերիչըն էլ բարձին այս պատմեց.

VIII

„Կային, չըկային երեք ընկերներ—
Մի դերձակ, մի հիւսն, երրորդը՝ տէրտէր.
Երեքն էլ սիրով, անկեղծ ու արդար։
Նրանք ունէին բազմաթիւ ոչխար,
Որոնց երեքն էլ գիշերը հերթով
Պիտի հովւէին արթուն աչքերով։
Հերթը հասնում է հիւսնին մի գիշեր.—
Երբ քնած էին նրա ընկերներ,
Նա մի ծառ կտրեց, փայտէ մարդ շինեց,
Կանգնացրեց գետնին ու ինքը քնեց։
Դերձակինն էր հերթը միւս գիշեր.—
Երբ քնած էին նրա ընկերներ,

Մթութեան միջին տեսնում է յանկարծ
Մի մեծ փայտէ մարդ, գետնին դիք կանգնած։
Նա չոր է կարում, փայտին հագցընում,
Իսկ ինքը պառկում, անուշ խռմփացնում։
Երբ մեր տէրտէրը հետևեալ դիշեր
Տեսաւ այն կանգնած մարդկային պատկեր,
Ազօթք է անում իր Տէր Աստուծուն,
Որ չունչ պարգևի այդ փայտէ մարդուն։
Նրա աղերսը Աստուած էլ լսեց
Ու փայտէ մարդուն հոգի պարգևեց։
Դէ, ոսկեթել բա՛րձ, ասա ինձ հիմի —
Այդ ասած մարդս ում կըպատկանի?“

Բ ա ր ձ

Ի հարկէ, հիւանին։

Ո ս կ ե ր ի չ. (Փետմամբ պնդելով իր ասածը և արքայադստեր նայելով).

Ոչ ոչ! դերձակին!

Բ ա ր ձ (տաքացած)

Ոչ հիւանին! հիւանին!..

(Բարձը և Ոսկեփիչը սկսում են սաստիկ վիճել)։

Ա ր ք ա յ ա դ ս ւ ս տ ր. (Համբերութիւնը հատած և հազիւ հազ թոթովելով)

Դուք սխալւում էք... Նա տէրտէրինն է!..

XI

Խոզոյն ներս վազեց սրտատրոփ արջան,
Գրկեց քաղցրախօս իր սիրուն աղջկան
Եւ ուրախութեան արցունքը աչքին
Համբուրեց, օրհնեց իր փեսացուին։
Թագուհի մայրը, պալատականները,
Շատ մեծամեծներ, բարձր իշխանները՝
Ուրախ հրճւելով՝ դահլիճ վազեցին
Ու թագաւորի աչքը լոյս արին։
Ամբողջ պալատը, իբրև մարմնացած
Մի ուրախութիւն թնդաց, որոտաց։
Արժանի փեսին ամենքը գովում,
Անվերջ օրհնում են ու փառաբանում։
Ալեզարդ արքան հարսանիք սարքեց
Եւ ոսկերչի հետ դատեր պսակեց.
Իր գանձի կէսը տուեց փեսային,
Պետ նշանակեց իր ղօրքի գլխին։

X

Իբրև արտակից եղբայր անբաժան՝
Բարիքը կիսեց արքայի փեսան,
Արքայի որդուն, անկեղծ ընկերին՝
Նա մխիթարեց, տուեց իր բաժին։
Ապա դաշոյնը նա ձեռքն առաւ

Եւ նորահարսին կիսել ուզեցաւ։
Մեր արքայորդին ահ ու սարսափով,
Ընկերի առաջ չդքած ու լալով,
Ինդրում է խղճալ անմեղ աղջկան,
Ի զուր չըսպանել, խնայել նրան.
„Ես դոհ եմ տւած քո բարիքներով,
Կինըդ քեզ լինի իր ամբողջ կեանքով.
Մի կիսիր նրան, թող նա ողջ մընայ!
Քեզ համար լինի, օ նրան գլխա!“
Դաշոյնը թողեց արքայի վեհան,
Դիմեց ընկերոջ և ասաց նրան.
„Դու արքայորդի, իմ ընկեր քաղցրիկ,
Քեզ է պատկանում արքայի աղջիկ!
Երբ հիւանդ հայրըդ զրկեց քեզ տնից
Ու քեզ աքսորեց իր պետութիւնից,
Երբ յուսահատւած ու մլատամոլոր՝
Անցար աշխարհներ, ընկար սար ու ձոր,
Ես եկայ քեզ մօտ պարտքըս քեզ տալու,
Տարտամ վիճակից քեզ ազատելու.
Ես բացի լեզուն արքայադստեր
Միայն քեզ համար, իմ բարի ընկեր!
Առ դու քո հարսին և բոլոր բարիք,
Ձանապարհ ընկիր դէպի հայրենիք!
Իսկ այս դեղն էլ դու կըտաս քո հօր
Եւ նա կ՚ազատւի իր ցաւից բոլոր։

Այսուհետ էլ մենք չենք տեսնիլ իրար.
Յանկամ երկուսիդ բարի ճանապարհ!..
Կուզես իմանալ դու՝ թէ ով եմ ես?—
Այն Ոսկէ Զուկն եմ, որին, յիշո՞ւմ ես,
Դու մի ժամանակ ծովում որսացիր,
Խղճալով նրան, ծովը ձգեցիր...“
Ասաց Զկնիկը, իսկոյն չքացաւ:

ՅՈՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՎԱՀԱՆԸ ԵՒ ՄԱՐԻԱՄԸ

(Հէնզէլ եւ Գրէտէլ)

Հէքիաթ

Քիտ անտառի շրջակայքում ապրում էր խեղճ փայտ կտրողը իր կնոջ, տղի և աղջկայ հետ:

Տղային կոչում էին Վահան, իսկ աղջկանը Մարիամ:

Եկաւ մի անբերրի տարի և սաստիկ սով ընկաւ: Փայտ կտրողը և նրա կինը չէին կարողանում իրանց երեխաներին կերակրել ու հազիւ քաղցից չմեռան:

Ծանր մտածմունքի մէջ ընկաւ փայտ կտրողը և մի գործի չէր կպչում. բայց խեղճը իր արածը ինքն էլ չէր հասկանում:

Մի անգամ գիշերը քունը չըտարաւ և երկար մի կողքից մեւս կողքն էր շուռ գալիս. վերջապէս ասաց կնոջը.

—Այ կին, հիմի մենք ինչ պիտի անենք:

—Ինչի՞ մասին ես հարցնում:

—Չը՛, մի թէ չես տեսնում, որ մենք չենք կարող մեր որդուցը կերակրել, նրանք քաղցից կըմեռնեն, իսկ ես այդ տանել չեմ կարող:

Կինը լռեց և երկար ոչինչ չէր խօսում: Պէտք է գիտենալ, որ նա Վահանի և Մարիամի խորթ մայրն էր: Վերջապէս շատ մտածելուց յետոյ ասաց.

Ձմեռւայ պաշար են ժողովում.

—Գիտես ինչ կանենք, այ մարդ։

—Ի՞նչ, կոչեց վայտ կտրողը։

—Ես մի լաւ բան մտածեցի։

—Ի՞նչ լաւ բան մտածեցիր։

—Մենք առաւօտը վաղ վեր կրկենանք անկողնից, Հետներս առնելով մեր որդոցը՝ կըտանենք նրանց անտառի ամենախիտ տեղերը և այնտեղ թողնելով՝ կըկորցնենք։

—Ոչ, ես այդ չեմ անիլ, ասաց մայրը նրան, մըթէ ես կարող եմ թողնել Հարազատ որդոցս գայլերին կերակուր լինելու։

—Ախ, դու որքան անխելք ես, վրայ բերեց կինը, ուրեմն ուզում ես, որ չորսս միասին քաղցից մեռնենք և եթէ այդպէս ես ցանկանում, գնա ու մեզ չորսիս Համար դազաղի տախտակ պատրաստէ, երևի դու անպատճառ այդ ես ցանկանում։

—Ես այդ բոլորովին չեմ ուզում։

—Եթէ չես ուզում, արա այն՝ ինչ որ քեզ ասում են։ Եւ կինը երկար ստիպում էր կատարել իր պահանջը, մինչև որ նա յանձն առաւ երեխաներին կորցնել։ Վահանը և Մարիամը քաղցից չէին քնել և մօտ լինելով ծնողների անկողնուն, լսել էին նրանց բոլոր խօսակցութիւնը։

Երբ ծնողները քնեցին, Մարիամը սկսեց դառնապէս լայ լինել և կամացուկ ասաց Վահանին.

—Ա՛խ Վահան, մենք Հիմա կորած ենք. իսկ Վահանը պատասխանեց.

—Մի լար, քոյրս ինչ որ պէտք է ես կըՀոգամ. ու նա անկողնից վեր կացաւ և տան դուռը բանալով՝ դուրս եկաւ փողոց։

Լուսնեակ գիշեր էր։ Ամեն բան երևում էր ինչպէս ցերեկը. ամեն բան արծաթազօծած էր լուսնից. սպիտակ քարերը գետնի վրայ փայլփլում էին ինչպէս արծաթի կտորներ։ Վահանը գրպանը լցրեց այդ քարերով և շտապով եկաւ տուն, մտաւ տեղը և քնեց։

Արեւը նոր ծագելու վրայ էր, երբ խորթ մայրը զարթեցրեց երեխաներին:

—Վեր կացէք, գնանք անտառ փայտ բերելու, ասաց նա, ահա առէք մի մի կտոր հաց—ճաշի համար:

Մարիամը վերցրեց իր և եղբօր հացը ու ծածկեց գոգնոցի տակ, որովհետև եղբօր գրպանները լցրած էին քարերով:

Վահանը ճանապարհին չորս կողմն էր նայում և յետ մընում. այդ բանը նկատեց հայրը և հարցրեց.

—Դու այդ ինչո՞ւ ես յետ մնում և կանգնում:

—Հայր, ես կարծում էի թէ իմ սպիտակ կատուն կանգնել է մեր կտրում և ինձ *գնաս բարով* է ասում:

Բայց Վահանը յետ էր մնում և չորս կողմը նայում ոչ թէ նրա համար, այլ որպէս զի քարեր ձգէ ճանապարհին:

Գնալով հասան անտառի խորքը. հայրը ասաց.

—Դէ, որդիքս, գնացէք չոր փայտի կտորներ հաւաքեցէք, ձեզ համար կրակ վառեմ, որ չըմրսէք:

Վահանը և Մարիամը կրակի մօտ նստելով հացերը կերան ու պառկեցան քնելու. իսկ երբ զարթեցան՝ արդէն մութն էր:

—Հիմա մենք ինչպէս պիտի դուրս գանք անտառից, տխրած հարցրեց Մարիամը:

—Մի քիչ սպասիր, շուտով լուսին կըծագէ և մենք կըգնանք, պատասխանեց Վահանը:

Երբ լուսինը դուրս եկաւ, Վահանը քրոջը ձեռքից բռնած գնաց քարերի հետքով ճանապարհը գտնելու, որոնք լուսնի լուսի տակ ինչպէս արծաթի փայլում էին:

Այդպէս գնալով մինչև առաւօտ, նրանք հասան հայրական խրճիթը:

Հայրը և մինչև անգամ խորթ մայրը տխուր էին և երեկուանից մի յաջող բանի էին սպասում. տեսնելով կորցրած որդոց՝ խիստ ուրախացան, նրանց ուտացրին, խմեցրին ու պառկեցրին քնելու:

Այսպէս անցաւ մի քանի օր: Փայտ կտրողի պաշարը բո-

լորովին. Հատեց և կարիքը սովի հետ առաջանից շատացաւ։ Նրանց մօտ մնաց միայն մի քանի կտոր հաց, որ մի օր հազիւ բաւականացնէր։ — Կինը դարձեալ ասաց մարդուն — պէտք է այնպէս անել, որ մեր որդկերանց գաղտնի լինի, թէ չէ մենք բոլորս քաղցից կըմեռնենք. նրանց էլի տանենք անտառի ամենախոր տեղերը, որպէս զի ոչ մի կերպ չըգտնեն տան ճանապարհը։ Մարդը համոզւեց։

Երեխաները այս անգամ էլի չէին քնել և լսեցին խորթ մօր բոլոր ասածները։ Երբ ծնողները քնեցին, Վահանը վեր կացաւ որ փողոց գնայ քարեր ժողովելու, բայց տան դուռը փակ էր։ Բայց էլի նա քրոջը հանգստացրեց ասելով.

— Մի լաց լինիր, Մարիամ, մենք մի կերպ կրկին անտառից դուրս կըգանք. իսկ ես այդ մասին կըմտածեմ։

Վաղ առաւօտեան մանուկները դարձեալ ստացան խորթ մօրից մի մի կտոր հաց։ Ընտառ գնալիս Վահանը ճանապարհին հացը մանրում էր, կարծելով որ քարերի նման փշրանքների հետքով էլի կըգտնի տունը։

Ծնողները տարան որդոցը անտառի ամենախիտ տեղը։ Նրանք այստեղ դարձեալ կրակ վառեցին և ասացին որդոցը.

— Դուք այստեղ կացէք, իսկ մենք կըգնանք անտառի խորքը փայտ կտրելու և երեկոյեան կըգանք ձեզ տանելու։

Երբ երեխաները ուզում էին ուտել, Մարիամը իր հացը կիսեց։ Կերան, կշտացան ու պառկեցան քնելու։

Մարիամը դիշերը զարթնելով սկսեց լալ, բայց Վահանը նրան հանգստացրեց.

— Սպասիր, շուտով կըծագի լուսինը և մենք կըգտնենք տան ճանապարհը, չէ՞ որ երէկ ճանապարհին դուր տեղը չըմանրեցի հացս։

Ծագեց լուսինը և լուսաւորեց ամբողջ անտառը. Վահանը Մարիամի ձեռքից բռնած փնտրում էր հացի կտորները, բայց վայր թափած հացի կտորները չէին երևում. հաւանական է թռչունները կերած լինէին։

Ամբողջ օրը երեխաները շրջեցին անտառում. նրանք շատ ուզում էին ուտել, բայց մրգեղէնից աւելի ոչինչ չըգտան. ահա այսպէս անցկացրին երկու օր:

Վահանն ու Մարիամը շատ քարշ եկան և յոգնեցան: Հազիւ կարողանում էին անտառի թաւուտ տեղերով գնալ:

Գնացին, գնացին և տեսան ծառի ճիւղի վրայ մի սպիտակ թռչուն է նստած ու քաղցր երգում է: Նրանք կանգնեցին, որ լսեն նրա երգը: Թռչունը ցատկեց ու թռաւ. իսկ երեխաները հետևեցին նրան:

Գնացին նրա յետևից և հասան մի փոքրիկ խրճիթի: Թռչունը նստեց կտուրի վրայ:

Երեխաները մօտենալով նրան՝ տեսան որ մեղրահացից է շինած: Կտուրը նշենու քաղցր կեղևներից, իսկ լուսամուտներում ապակու փոխարէն ամրացրած էր վանաշաքար և ապակիների շրջանակները շինած էին շոկոլադից:

—Ո՜հ, որքան քաղցրաւենիք կայ, բացականչեց Վահանը, այ մենք այստեղ կուշտ կարող ենք ուտել:

—Բայց հրաշք. որքան շատ է, կանչեց ուրախացած Մարիամը: Վահանը մագլցելով բարձրացաւ տան կտուրը և մի կտոր պոկեց, իսկ Մարիամը մօտեցաւ պատուհանին և սկսեց վանաշաքարը քչփորել:

Յանկարծ խրճիթից մի ձայն լսեց.

—Ով է այդ, որ քանդում է քաղցր խրճիթս:

Մանուկները սկզբում վախեցան, բայց երբ խրճիթից երկրորդ անգամ կրկնուեց նոյն հարցը, պատասխանեցին իրանց ծանօթ երգով.

Քամին է քամին,
Պատռում ջրում է,
Քամին է քամին,
Տնակը քանդում է:

Եւ շարունակեցին խրճիթի քաղցրաւենիքը անուշ անել: Նրանք նստել և ուրախանում էին իրանց քաղցր ճաշով,

յանկարծ տնակի դուռը բացւեց և շէմքում կանգնեց մի քաւթաւռ կին, նեցուկ տալով դաւազանին։

—Իմ սիրելի մանուկներս, այդ ինչպէս եկաք դուք այստեղ, հարցրեց նա գլուխը շարժելով։

—Մենք մոլորւել ենք, մեծ մայր։

—Ա՜... զարմացաւ կինը, ուրեմն եթէ մոլորւել էք, եկէք ինձ մօտ և այստեղ ձեզ համար շատ լաւ կըլինի։ Այս ասելով երեխաների ձեռքերից բռնեց ու տարաւ տուն։ Տանը նրանց պատւեց կաթով և խնձորով։

Երբ երեխաները կշտացան, պառաւը նրանց պառկեցրեց փափուկ անկողինների մէջ քնելու։ Վահանը և Մարիամը կարծում էին թէ դրախտումն են։ Այդ պառաւ կինը կախարդ էր։

Նա դիտմամբ շինել էր այդ մեղրահացերով՝ զարդարւած տնակը, որ հրապուրէ մոլորւած երեխաներին։ Իսկ երբ նա որսում էր, այն ժամանակ եփում և ուտում էր նրանց։

Որսալով մեր թշւառ Վահանին ու Մարիամին՝ պառաւ կախարդը գիտէր որ իր մօտից չեն գնալ։

Վաղ առաւօտեան երբ երեխաները դեռ քաղցր և խոր քնով ննջում էին, նա մօտեցաւ Վահանին ու նրան առնելով կախարդական ձեռների վրայ՝ տարաւ դոմը ասելով.

—Ո՛հ, դու ինձ համար ինչպիսի համեղ պատառ կըլինես, երբ քեզ լաւ կերակրեմ։ Յետոյ նա Վահանի վրայ դուռը նիգով փակեց ու գնաց Մարիամին զարթեցնելու։

—Վեր կաց, դու ծոյլ, վեր կաց, բոլթում էր նրան, չէ որ եղբայրդ դոմումն է, նրա համար հարկաւոր է մի շատ լաւ բան եփել, որ շուտով չաղանայ։ Իսկ երբ կըչաղանայ՝ այն ժամանակ ես նրան կըխորովեմ և անուշ կ՝անեմ։

Մարիամը լսելով կախարդի այդ խօսքերը՝ դառնապէս լաց եղաւ։ Բայց նրա արտասուքներն անօգուտ էին. պառաւն անխիղճ էր և նա պէտք է համաձայնւէր։

Մարիամը սկսեց ծառայել կախարդին։

Կախարդը մի ամբողջ ամիս կերակրեց Վահանին և ամեն առաւօտ մօտենալով դոմին՝ հարցնում էր.

—Է՛յ տղայ, կենդանի՞ ես:

—Կենդանի եմ, մեծ մայր, պատասխանում էր խեղճ բանտարկեալը:

—Իսկ չաղանո՞ւմ ես արդեօք:

—Չաղանում եմ, մեծ մայր:

—Չա՞ռ:

—Չատ:

—Մի տարեկան երինջի չափ կա՞ս:

—Մի քիչ փոքր եմ, մեծ մայր:

—Ցոյց տուր ինձ մատդ:

Վահանը իր մատի տեղ ցոյց տւեց մի ոսկորի կտոր և կարճատես կախարդը զարմացաւ որ նա չէ չաղանում:

(Վերջը միւս անգամ)





Ա Ս Տ Ղ Ե Ր

(Կոս-Մուրիկայի)

Երերային անեզր ծովում արեգները մեղմիկ կերպով շրջաններ են գործում:

Ամեն մի շարժումը թռթռալով՝ եթերի անեզր տարածութեան մէջ անզգալի ձայն է առաջացնում: Բիւրաւոր վայլող աստղերի շարժումը միաւորւում է ընդհանուր ներդաշնակ խմբերի հետ, որ հլիմն է երգում աշխարհի ստեղծագործութեանը:

Ո՞րտեղ է նրա սահմանը: Որտե՞ղ է նրա սկիզբը:

Անմահութիւնը ընդգրկել է նրան իր անվերջ օղակով և վեմ դաղտնիքը փակւել է անսկզբնական Հոդու սրտում:

Ամեն մի արեգ իր մօտն է քարշում իւաւարածու մարած աստղերին: Ամեն մոլորակ կեանքով է լցւած—այն կեանքով, որ որպէս կենդանի աղբիւր, յաւիտեան դուրս է թափւում անսկզբնական վեմ սրտից: Եւ այդ կեանքն մէջ է պարունակւում բոլոր շարժման պատկը:

Ո՞ւր է ընթանում այդ շարժումը! Ո՞րտեղ է դրա կէտ նպատակը!

Ապրել և զգալ! ասում է երկրային արեգը և՛ օդը և՛ բոլոր երկրային բնութիւնը:

Բայց շարժումը երկրային արեգի, օդի և ընութեան սահմանից դէնն է անցնում:

Նա ընթանում է այնտեղ, որտեղից սկիզբն է առել— դէպ անսկզբնական Հոգու սիրող վսեմ սրտի մօտ է ընթանում նա...

—

Եթերային անեզր ծովում արեգները մեղմիկ կերպով շրջաններ են գործում:

Երկրային կուռում է երկրի վրայ: Երկիրը երկնքի հետ է կռւում:

Որտեղից և ինչպէս է առաջ եկել այդ կռիւը, այդ շարժումը: Ո՞վ է լրտեսել, ո՞վ է թագցնում այդ մեծ գաղտնիքը:

Գուցէ այդ շարժումն է գոչել եթերի անչափելի ովկեանում այն վսեմ խօսքը՝ *Լոյս լինիցի!*—Եւ այդ խօսքի մէջն է ճառել կեանքի ստեղծիչ ոյժը և վսեմ, ազատ սէրն ամբողջ աշխարհի:

Գուցէ այդ շարժումը մեղմիկ և աննկատելի կերպով է ներս թափանցել, և կեանքը Հոսել է, որպէս ծանրաշարժ առւակ՝ անապատային տարածութեան մէջ, ուր առաջ իշխում էր քունը և անշարժութիւնը!

Մեռելային անդորրութեամբ ընկած էր հաւասարակշռութիւնը աշխարհի չքդոյութեան մէջ, սակայն Բանը մարմին դարձաւ, Բանը շարժողութիւն դարձաւ—վսեմ և յաւիտենական Բանը:

Եւ երևաց նա աշխարհի հիւլէների մէջ—եկան թշնամացած, բաժանելու տենչով: Սուր բերեց նրա աշխարհը և բաժանեց երկրայինը՝ երկնքից:

Առաջ եկան՝ հարստութիւնն ու աղքատութիւնը, բարեկամներն ու թշնամիները, բարին ու չարը:

Փանրաբեռնաւած հիւլէները մէկը միւսի մօտ էին սլանում, և մի էին ձուլւում և գնդեր ու կենդրոնաձիգ ոյժ էին կազմում: Թեթև հիւլէները աշխատում էին դուրս սլանալ երկ-

բային, մարմնաւոր արգելանոցից—դէպ եթերային ընդարձակութիւնը: Նրանք արտաքուստ էին փախուստ տալիս—դուրս պրծնելով արճճեայ ծանր մետաղների գրկից...

Եւ այն ժամանակից առաջ եկաւ կռիւը՝ բոլոր անջատւածների գոյութեան և ընթացքի մէջ: Փառաբանական հիմները և տանջանաց հառաչանքները սաւառնում են դէպ եթերային տարածութիւնը՝ դէպ անսկզբնական Հոգու աթոռը, և երկիրը վիճում է երկնքի հետ...

Բայց Միութիւնից անջատւածը ընթանում է յաւիտեան դէպ Միութիւնը, և բոլորը միանում են աշխարհային սիրով: Երկրայինը, դադրած երկար կռիւ մղելուց, կրմլանայ երկնայինի հետ և բազմաթիւ աշխարհները բարձրաձայն կ'երգեն փառքի մեծ հիմնը: Կրկատարւի այն, ինչ որ պիտի կատարւէր: Կ'իրագործւի այն, ինչ որ պահւած է Աշխարհի Գիտակցութեան կամքի և ոյժի մէջ...

Եթերային անեզր ծովում արեգները անդադար և մեղմիկ շրջաններ են գործում:

Ք. ԹՈՒՄԲԵԱՆ



ԵՐԱԽՏԱՊԱՀԱՆԶ

(Լեգենդա)

բանից մօտ ութսուն, իննսուն տարի առաջ Էրզրումի մէջ ապրում էին տնանկ Ներսէս-աղբարն ու մեծ կարողութեան տէր Նիկողոս աղան, որ Կ. Պոլսում երկար ապրած լինելով՝ լաւ յունարէն գիտէր, այդ պատճառով էլ կարնեցիք նրան միւս Նիկողոս աղաներից զանազանելու համար Ուռում Նիկողոս էին կանչում:

Ներսէս աղբարն էլ ժամանակին շատ հարուստ է եղել, մեծ օջախի որդի, խոստքը փաշաների, վէզիրների քով անց, բայց չարաչար ձախորդութիւնների է հանդիպել: Նրա ապրանքների կարաւանները Կ. Պոլսի, Դամասկոսի ճանապարհներին վրայ աւարի է մատնուել աւազակների ձեռքը, նաւերը Սև և Միջերկրական ծովերում ծովահէնների ձեռքն է անցել, ոչխարների հօտերը քրդերը քշել տարել են, իսկ քաղաքում ունեցած ապրանքների մթերանոցները և հայի շտեմարանները կրակի էին տուել, վառել նրա հակառակորդները: Այնպէս քայքայուել էին նրա միւլքերը, խանները, խանութները, որ բոլորի հիմքն արեգակն էր ելել և այս ու այն եկել, բռնի տիրացել ու իրանց համար կալւածներ էին շինել: Ներսէս աղբարն էլ այնպէս մոլորուել, այնպէս յուսահատուել էր, որ ամեն բան, ապրե-

լը, կեանքն անգամ տչքից ընկել էր, զգւել էր չարասիրտ դրացիներից և տանջանքով քաշքշւում էր:

Թէև բլբլկած, խարխլած, բայց մեծութեան նշանները դեռ երևում էին նրա տան արտաքին տեսքից, իսկ ինքն էլ թէև հին հագուստ էր հագնում, մաշած և մաղած, բայց ժամանակին այդ շորերը ինչ թանգագին կերպասներից կազմըւած լինելը յայտնապէս նշմարւում էր: Նա ծերացել, կորացել, ղէմքը կնճիռներով ծածկւել էր, բայց վեհ հոգին դեռ չէր կորցրել: Խեղճ էր, աղքատ էր Ներսէս աղբարը, դրացիների, բարեկամների նպաստներին կարօտ, բայց երբէք նա չէր մուրացել, երբէք չէր զիջել, ողորմութիւն խնդրել և ուրիշի միւնաթով չէր ապրել:

Մի օր բազարում Նիկողոս աղան մսագործի խանութի առաջ պատահեց Ներսէս աղբօրն ու նրա համար տասը փարայով ($1^1/_2$ կոպ.) մի ոչխարի թոք գնելով ասաց.

—Ներսէս աղբար, այս թոքն էլ դու տար ձեր տուն:

—Չնորհակալ եմ, ասաց Ներսէս աղբարն ու թոքը մսագործի ձեռքից առնելով՝ Նիկողոս աղայի հետ վերադարձան իրանց տները: Նիկողոս աղան մի շախկա միս էր առել, ամբողջ դմակն էլ հետը, տւել էր ծառայի կռնակը, որ ետևից գալիս էր, իսկ Ներսէս աղբարն էլ համեստաբար մի քայլ ետ ընկած հետևում էր Նիկողոս աղային:

Երբ շուկայից դուրս եկան, անօրէն տաճիկների շրջանից ազատւեցան, այնպէս որ այլևս ենիչէրիից, կամ կծան մոլլայից զգուշանալու առիթ չըմնաց, Նիկողոս աղան ասաց Ներսէս աղբօրը փորձած մարդու խրատականի շեշտերով.

—Գիտես, քրոջս (այսինքն Ներսէսի կնոջը) ասա, թող թոքերի, սրտի ճարպերը առաջ սուր դանակով լաւ մաքրէ, յետոյ այդ ճարպը կրակի վրայ սկաւառակում հանդարտ հալեցնէ, մի օր այդ ճարպի մէջ սպիտակ թոքերը տապակէ, միւս օրը սևը և երրորդ օրը սիրուր: Պատւիրիր, որ լաւ մանրէ թոքերը, թէ չէ տժւժիկը համով չի լինիլ: Գիտես, Ներսէս

աղբար, մենք բարեկամ ենք, այդ պատճառով բարեկամական խորհուրդ եմ տալիս: Խօ տեսնում ես, թէ որքան դժւար է այդ անհաւատների բազարի միջից մի բան առնելն ու տանելը, կէս կեանքդ մաշւում է, հապա որքան դժւարութեամբ է մարդ տասը փարա աշխատում: Պէտք է տնտեսութեամբ ապրել, շահից չի դիզւիլ հազարներ, ատամներից պէտք է աւելացնել, ետ ձգել: Ասա քրոջս (կնոջդ) թող կրակը մեղմ վառէ, որ ճարպը չբսևանայ ու չբփչանայ. փայտին էլ խնայողութիւն կըլինի, կերակրին էլ համը չի կորչի և սեղան բերելիս, թող ճարպը լաւ քամէ, պահէ, որ միւս օրւան տապկոցին բանացնէ: Դեռ եթէ լաւ տնտես լինի մարդու կինը, կարդին տնաբար sժւժիկի եղը այնպէս խնայողութեամբ կըբանացնէ, որ չորրորդ օրը նրա մէջ կարողանայ բիճի եփել և մանր ու խոշորին կշտացնել. sժւժիկը շատ համով բան է, բայց հարկաւոր է լաւ զգուշութեամբ աղը, տաքդեղը կարգին լցնել և մեղմ կրակով տապակել: Աւելի լաւ կըլինի, որ սև թոքի և սպիտակ թոքի կէսերը մի օր եփէ, միւս օրը մնացորդները: Որքան համով կըլինի, տաք-տաք մարդ փաթուկ լաւաշի մէջ բրդուռ անէ ու խշտէ: Ներսէս աղբար, երբ երևակայում ես, թուքդ չի վազում...

Ներսէս աղբարը լուռ, մունջ հետևում էր բարերար Նիկողոս աղային և վերջինս երբ հարցեր էր տալիս ու նրա երեսին մտիկ անում, Ներսէս աղբարը գլուխը խոնարհեցնում էր համաձայնութեան նշան տալու ձևով: Նիկողոս աղան սպասում էր, որ Ներսէս աղբարը շնորհակալութիւն յայտնի, երախտագիտութիւնը արտայայտի լեզւով ու որոշ բառերով, բայց Ներսէսն ամօթից ձայն անգամ չէր կարողանում բարձրացնել: Նիկողոս աղան երբ մի մեծ բարիք գործած, դարձեալ շարունակեց իր խրատական յորդորները ու տիրական հարցերը Ներսէս աղբօր բերանից երախտագիտութեան խօսքեր լսելու մրտքով, բայց Ներսէսը խորասուզած դառն մտքերով, չէր էլ ըմբռնում Նիկողոս աղայի առածները:

Թշւառ Ներսէս, ասում էր նա իր մտքում, մի ժամանակ հարիւրաւոր աղքատներ, կարօտեալներ, թշւառներ և օտարականներ քո հովանու տակ պատսպարան էին գտնում, ուտում, խմում, կշտանում, հագնւում և ծածկւում ու այնպէս ճանապարհ ընկնում, հարիւրաւոր կարօտեալներ գործ էին ճարում քու դրան և ընտանիքները ապրեցնում. ամեն մի դրացիդ, ծանօթիդ ու անծանօթիդ օգնութեան էիր հասնում և ոչ օքից մի օր երախտագիտութեան նշան մտքովդ անգամ չէր անցնում պահանջել, իսկ այսօր Ուռում Նիկողոսը, կարկատող Ղազարի որդին մի թօք առնէ քու ընտանիքիդ կերակրելու համար և այսքան քարող կարդայ քու գլխին և երախտագիտութիւն պահանջէ...

Մինչև տուն հասնելը, էլ ինչ քարող չըկարդաց Նիկողոս աղան Ներսէս աղբօր գլխին, ինչ խրատներ չըտուեց, որ ժուժկալ լինի, քչով բաւականանայ, ուրիշի արած բարիքը գիտենայ և ոչ օքի երախտապարտ չըմնայ։ Նա ասում էր անդադար.

—Ի՜նչ մեծ բան է, որ տղայիդ ուղարկես մի օր գայ մեր աթարը կտրէ, խօ հոգին չի դուրս գալ, ձեռները չի չորնալ։ Ես տանը մի քանի տեսակ ծառաներ ունիմ, այնքան ձրիակերներ, հացկատակներ կան, որ կարիք չունիմ մարդու։ Բայց թող լինի, պատիւ պահելը մեծ բան է։ Մի օր աղջկանդ ուղարկէ, թող գայ մեր տախտակները լւանայ, ինչ վնաս, խօ մէջքը չի կոտրի։ Էլի չ'ասի, մեր տունը դու գիտես որ մի քանի տասնեակ բանանողներ, աղախիններ կան, մեր սենեակների յատակները այնպէս մաքուր և այնպէս ճերմակ են, որ եղ թափես կրժողովի առանց մի հատը աղտոտելու, կամ փչանալու, բայց իմ ասելս, միտքս ուրիշ է։ Պատիւ պահէ, որ պատիւդ բարձրանայ։ Եթէ քու կինը մի օր գայ և մեր լւացքը լւանայ, կամ հացը եփէ, խօ չի մեռնիլ, բայց չէ որ իմ կինը նրա պատիւը պարտաւորւած պիտի պահէ, փոխադարձաբար նրա վրայ իր շնորհքը պիտի աւելացնէ։

Նիկողոսը բնական ճարպիկ մարդ էր, իսկ Կ. Պոլսում երկար սպրելով լիզել ու զելել էր։ Այնքան լեզու թափեց, որ խլացուց Ներսէս աղբօրը, որ մտքումը ասում էր—երանի՛ այսօր քեզ պատահած չըլինէի, գլուխդ ուտէր այս թոռքը։ Թո՛ղ իմ ընտանիքս քաղցից կոտորուէր ու դու այս թոռքը ինձ չըտայիր, որ տուն տանէի։—Բայց Նիկողոսը խո՛ մարդարէ չէր, որ Հասկանար Ներսէս աղբօր մտքից անցածն ու խօսքը փոխէր։ Նա միայն մի բանի էր ձգտում, որ մարդիկ ասեն, խօսեն, թէ կայ չըկայ Էրզրումում մի աղա կայ, այն էլ ուռում Նիկողոսն է և ամենքն էլ երախտագիտութեամբ խոնարհւին նրա առաջ։

Երբ Հասան Ներսէս աղբօր դրան առաջ, Նիկողոս աղա կանգնեց ու ասաց—տանդ տեղը շատ լաւ է եղել, բայց ափսո՛ս որ շինողները անտաշ, կոպիտ մարդիկ են եղել, այնպէս չեն կարողացել շինել, որ դարերի դէմ կուէ։ Ուզում էր այս խօսքերով ծակել Ներսէսի սիրտը և իր մեծութիւնը, հեւատեսութիւնը ցոյց տալ։

Երբ Ներսէս աղբարն արտորում էր տուն մտել, Նիկողոս աղան էլ ճար չըգտաւ նրան խօսեցնելու, ասաց.

—Ցանկանում եմ, ախորժակդ բարի, Համով ուտես տժժիկը։

—Շնորհակալ եմ, ասաց Ներսէս աղբարն և արագ քայլերով ներս ընկաւ իր տունը, Հազիւ ազատւելով Նիկողոս աղայի ճանկից։

Մեծ էր Ներսէս աղբօր ընտանիքը։ Կինը արդէն թան պատրաստել էր, ելաւ տժժիկն էլ եփեց, նստան կերան և Հազիւ կշտացած սեղանից բարձրացան։ Մեծ տան զաւակները, տնանկացած, թան ապուրով կամ տժժիկով մի՛թէ կարելի էր նրանց կշտացնել... Բայց ամեն բան Համբերութեամբ տանում էին և ձայները մարդ չէր լսում։

Իրիկնադէմին երբ ծանր քայլերով ժամի կողմն էր գնում Ներսէս աղբարը, որ դիմէ իր Արարչին, նրա օգնութիւնը և ողորմութիւնը խնդրէ, ճանապարհին պատահեց Նիկողոս աղան

և ասաց.—Հարի իրիկուն, Ներսէս աղբար, քէֆդ, հալդ ինչպէս է, ինչպէս նկատում եմ առոյգ, առոյգ ես փոխում քայլերդ. երիտասարդի ուժ ես ստացել: Ի՞նչպէս էր տղժւժիկը, համո՞վ էր, կարգին տապկեց քոյրս...

—Չատ օրինաւոր, աղա ջան, շատ շնորհակալ եմ, տունս, բոլորս էլ շատ շնորհակալ ենք, արագ արագ պատասխանեց Ներսէս աղբարը, որպէս զի Նիկողոս աղան տժւժիկի մասին խօսքը թողնէ, ուրիշ բան խօսէ, որ չըլինի թէ ժամուրնները լսեն և նա անարգւի, պատիւը վիրաւորւի:

—Երևի լաւ ախորժակով ես կերել, կարծես թարմացել ես, գոյնդ մինչև անգամ փոխւել է: Խո՛ աղբ, տաքտեղը, տապակւածքը կարգին էր, ասաց գւարթօրէն Նիկողոս աղան, առանց նկատողութեան առնելու, որ իր ձայնը փողոցից անց ու դարձ անողները լսում էին և Ներսէս աղբարը գայրոյթից կուչ եկած, կարծես ուզում էր, որ գետինը ճեղքւի ու ինքը մէջն ընկնի:

—Ամեն բան, ամեն ինչ կարգին էր, ասաց կակազելով Ներսէս աղբարը, որպէս զի մի կերպ վերջ տայ այդ խօսակցութեանը, բայց Նիկողոս աղան անպատճառ ուզում էր, որ այն օրւայ ժամուրնները բոլորը լսէին, թէ ինքը մի տասը փարանոց թոք է ողորմացել իր դրացուն, Ներսէս աղբօրը:

—Ողորմած Հոգի մայրս, ասաց խօսքը շարունակելով Նիկողոս աղան, խիստ լաւ տժւժիկ էր եփում, այնպէս պատւական, որ երբ դռնով տուն էի մտնում՝ նրա տապկոցի անուշ հոտից կշտանում էի: Այնպէս համեղ էր լինում, որ նրա մահից յետոյ կարօտ եմ մնացել նոյն համի տժւժիկի: Ափսո՜ս, հները մեռան, իրանց հետ կարգն ու սարքը գերեզման տարան: Քանի՛ քանի՛ անգամներ ախորժակս գրգռւել է, սիրտս ուզել է մի համեղ տժւժիկ, բայց երբ կարող են հիմիկւանները այնպիսի քաղցրաբոյր կերակուր եփել: Բայց քոյրս (քո կինը) նորերից չէ, նա կարծում եմ, որ լաւ տնարար պիտի լինի և համոզւած եմ, որ քեզ այսօր անփոխարինելի մի պատ-

ւական տժւժիկ կերցրած պիտի լինի: Չը՛, լաւն էր, չէ՞— ասաց ժամի գաւթում կանգնելով Նիկողոս աղան, աչքերը ուղղելով Ներսէս աղբօր երեսին:

—Ի՞նչպէս չէ, ինչպէս չէ, Հլաշալի էր, ասաց Ներսէս աղբարը և շտապեց եկեղեցի: Բայց եկեղեցում փոխանակ աղօթելու, փոխանակ փառաբանելու, սկսեց գանգատւել իր տիրոջից, թէ բաւական չէր, որ նրան այդ վիճակի մէջ էր դցել, բաւական չէր, որ այնքան զրկանքների և անարգանքների էր մատնել, իսկ այժմ տանջւում էր Նիկողոսի նման մի փառասէրի ճանդում:

Հետևեալ առաւօտ բաղար էր գնացել Ներսէս աղբարը: Սիրտը մի ֆինջան սուրճ խմել ուզեց ու մտաւ սրճարան: Կային այնպիսի բարի հոգիներ, որոնք նրա անցկացրած փառքի օրերին քաջ տեղեակ լինելով, առանց նկատելու, միայն մի ակնթարթով զայֆաչուն իմացնում էին, որ մի ֆինջան սուրճ տայ Ներսէս-աղբօրը: Այնպէս որ առանց մարդ իմանալու, առանց մէկի, միւսի դիտենալու, սա, նա, մի մի ֆինջան սուրճով պատւում էին տնանկին և նա որպէս իր զրպանից վճարելով, պատւաւոր կերպով հեռանում էր սրճարանից: Սովորականի համաձայն երբ սկսեց սուրճ խմել, Նիկողոս աղան մտաւ սրճարան և անմռունչ բարևելով նստաւ Ներսէս աղբօր դիմաց: Ներսէսի սուրճը քթից եկաւ: Նա զգաց, որ Նիկողոսը անպատճառ իր բարերարութեան խօսքը բանալու էր, այն էլ հրապարակաւ: Եւ ուղիղ սուրճի ֆինջանը ձեռքին, չիբուխից ծխախոտը ծխելով ասաց Նիկողոս տղան.

—Չը՛, ինչպէս ես, Ներսէս աղբար, երեկ լաւ ախորժակով վայելեցիր տժւժիկը, համով էր, հը՛: Մարդու քէֆը կըգայ, երբ սրտի ուզածին պէս կըպատրաստեն սիրած կերակուրը:

—Ինչպէս չէ, ինչպէս չէ, կմկմաց Ներսէս աղբարը, յուսալով որ Նիկողոս աղան իր պատւից կ'ամաչէ և չի պարկիլ թոքի պատմութիւնը, թէև սիրտը բորբոքումից արդէն սկսել էր բաբախել:

—Այդ ինչ տժուժիկ է—մէջ ընկաւ սրճարանի պարապ հիւրերից մինը։

—Ոչինչ, ասաց Նիկողոս աղան ծանրացնելով խօսքը, երէկ մեր մսագործի մօտ մի լաւ թռչք տեսայ։ Սիրտս ուզեց, առայ, որ տուն ուզարկեմ, բայց ափսոսացի, որովհետև մեր տունը կարգին չի կարող ուզածս տժուժիկը եփել։ Այդ մըտմտունքի մէջ էի, որ պատահեց Ներսէս աղբարը, իսկոյն տվի նրան։ Ասի մէկ չէ՞ մեր տուն ղրկած, ձեր տուն ղրկած։ Փառք Աստծու, մենք դրացիներ ենք, ջոկողութիւն երբէք դրել չենք իրար մէջ, իմ ու քու ճրը է մտել մեր մէջ, ով է փչնտրել։ Մենակ քէֆս եկաւ, ես հաւատացած եմ, որ քոյրս չէր փչացնի այն պատւական թռչքը, կարգին բան կ'եփէր։ Իմ ուզածն էլ այն է, որ բանը տեղը առնէ և լիազաթ ունենայ։ Մեր տուն որ ղրկէի՝ զահրումար էր դառնալու, ով կարող էր թիքա ուտել։ Լաւ բանը սիրում եմ, դիտեմ, որ քոյրս այնպէս տապակած կըլինէր, որ Ներսէս աղբարը Համից, Հոտից հարբած մատներն էլ խածոտած կըլինի տժուժիկի պատառների հետ։ Փէհ, այժմ շարունակութիւնը դու պատմէ, Ներսէս աղբար, ես իմս պրծայ։

—Է՜հ, ինչ պատմեմ, շնորհակալ եմ եփեցինք, կերանք, պրծաւ, գնաց, ասաց Ներսէսը կարմրելով,

—Անուշ լինի, խօսքս դրա մասին չէր։ Ուզում էի իմանալ, թէ կարգին էր տապակած տժուժիկը, համով էր։

—Չատ համեղ, շատ ախորժելի, ասաց սիրտը մորմոքալով Ներսէս աղբարը ողջ անձով քրտնած, թրջւած։

—Այդ հասկանում եմ, մարդ ուզածը գտնէ, տեղովը,տեղակի։

Ներսէս աղբարը դուրս եկաւ, այլ ևս կիրքը չրկարողանալով զսպել, բայց Նիկողոսին էլ հաճել էր, որ ամեն տեղ տըժուժիկի պատմութիւնը խօսւի։ Որտեղ որ պատահէր, ուր որ հանդիպէր, խօսքը տժուժիկի մասին պիտի բանար, կամ այդ մասին հարցեր պիտի տար։

—Ներսէս աղբար, յիշում ես թռչքը, կամ թէ—ինչ-

պէս համեղ էր տժուիկը։ Ողջ քաղաքը տժուիկի չաւն ընկաւ, Նիկողոսը ամեն տեղ պատմեց ու խօսեց։

Անցաւ մի շաբաթ, մի ամիս, երեք ամիս, վեց ամիս, վերջապէս տարի, բայց Նիկողոս աղան որտեղ պատահէր՝ պիտի յիշեցնէր Ներսէսին Թոքը և տժուիկը։ Թէ փողոցում, թէ եկեղեցու գաւթում, թէ սրճարանում, թէ բաղնիսում, թէ հարկինքում և թէ վերջապէս ժողովներում, այնպէս որ հազար անգամ քթիից, պնչից դուրս եկաւ Ներսէս աղբօր Նիկողոս աղայի գնած Թոքից տժուիկը։ Էլ համբերութիւնը սպառած, մի օր նոյն մսագործի խանութի դրան առաջ կանգնած, աբայի (վերարկու արևելեան) տակ մի բան թաղցրած՝ սպասում էր Ներսէս աղբարը։ Փէպքն այնպէս բերեց, որ Նիկողոս աղան էլ այնտեղ եկաւ իրանց ծառայի հետ միս առնելու և իրան նկատելով Ներսէս աղբարը՝ ասաց.

—Ներսէս աղբար, ինչպէս ես, լաւ ես։ Յիշում ես այն Թոքը, այն համեղ տժուիկը...

—Ետ առ քու Թոքը և ձայնդ կտրէ, ասաց զայրացած Ներսէս աղբարը և աբայի տակ թաքցրած Թոքը դուրս հանելով, այնպէս շրմփացրեց Նիկողոս աղայի քթին, բերանին, որ վերջինս ապուշ դարձաւ, տեղն ու տեղը մնաց, երեսը, գլխի թանգագին շալը, գլուխը արիւնով ներկուած։

ԱՏՐՊԵՏ





ԳՈՐԾԱԹՈՂ ԿԻՆԸ

Եսայ ես նըբան, Թըշտառ խղճուկին,
Գեղեցիկ ու ժիր աղջիկը ռամկին.
Գործաթողների սուաց ամբոխում
Առաջ էր գընում՝ սև միտք իր գլխում:
Արշալոյսը նրան չէ տըւել ժպիտ,
Կեանքում չէ եղել վայելքի առիթ.
Դառն աշխատանքի տակ մէջքը ծալած՝
Նա չարչարւել է, տեսել ցաւ ու լաց:
Բայց իր սիրտն՝ ինչպէս Թռչնակի Թևեր՝
Ստէպ երազներով սըլացել է վեր,
Յոյսերի կարօտ՝ ապրել ըղձալով,
Սէր, ուրախութիւն, հանգիստ բաղձալով:
Ջաւակ խեղճութեան Թըշտառ գըրկին,
Շահասիրութեամբ կուշտափոր տէրի
Այսօր անօթի ու մատնւած մահին՝
«Չա՛ց, Հա՛ց» է պոռում ուրիշին գերի:
Բիւրերը են այդպէս գընում ու գալիս,
Երկաթէ ձեռքի տակ տանջըւում, լալիս
Եւ մահացընում աշխատանքի տակ
Իրանց կեանքն, իրանց արգանդի զաւակ:
Յուսահատութիւնն իր գունատ դէմքին,

Նա գնում է դէպ վեհ, մահըն իր աչքին,
Մինչ այնտեղ, հէնց գլիծ այդ եղերութեան
Այլ կիներ ունեն բաժին զեղխութեան։
Խեղճուկի ձեռքով հիւսուածք, գործուածքներ,
Փապաւէն, մետաքս, ճոխ զարդարուածքներ
Ամփոփում են նրանց իրան, մարմինները,
Գեղեցկացնում նրանց ներկուած երեսները։
Ա՜հ, նզոված օրէնք այս դառըն կեանքում.
Հազարն աշխատում, մէկն է վայելքում,
Պաշտուած է անգործն, աշխատողն ջարդուած,
Քրոջ արեան գընով քոյրն է զարդարուած։
Նըրանք կերակրող, նըրանք մայր մարդկանց,
Բայց միշտ մերկ, թշուառ, կեանքը բանտ իրանց,
Մինչ միւսներ, որ նրանց մահ են պատճառում,
Աստուածուհիք են կեանքի կաճառում։

Ա. Լ—նց

ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԻՓԻԳԷՆԻԱ *)

(Եւրիպիդէ)

Վաւատս ինձ, որ սիրում եմ քեզ, ով իմ զաւակս, ասաց Ագամեմնոնը: Բայց և այնպէս պէտք է կամայ թէ ակամայ այն ինչ որ քեզ յայտնի է: Անհրաժեշտ Հարկաւոր է Տրոյացոց պատժել, որ մի ւս անգամ չըհամարձակուեն յոյն կանանց պատուին դիպչել: Եթէ դու չըզոհուես, այն ժամանակ մենք բոլորս կորած ենք: Ձըկարծես թէ Հելենէի և Մենելաոսի համար ես զոհւում, ոչ, այլ ամբողջ Յունաստանի, քո հայրենիքի, որի Հողն ու ջուրն քեզ պահել ու սնճացրել է:

Այդ խօսակցութեան ժամանակ Աքիլլէսն եկաւ և դաւալի հառաչանքով յայտնեց, թէ բանակն ուժով պահանջում է, որ օրիորդը զոհւի: Երբ փորձում էի, որ նրանց դիտաւորութիւնը փոխեմ, այն ժամանակ քիչ էր մնում, որ բանակում ինձ քարկոծէին:

—Դժբաղդ զօրիկ, այլ ևս յոյս չըկայ, որ դու պէտք է ապրես, ասաց Թազուհին: Ամբոխը բազմաթիւ է և Աքիլլէսը չէ կարող հազարների դէմ կռւել: Ասա՛ ինդրեմ, ով պատանի, այժմ և իսկ գաղիս են զաւակս յափշտակելու:

—Օրիորդի վարսերից բռնելով՝ սեղան կըտանեմ, պատասխանեց Աքիլլէսը. բայց հաւատա ինձ, թոյլ չեմ տալ, որ նրանք անեն այն՝ ինչ որ կամենում են: Քանի որ ես կենդանի եմ և

*) Տես Սդրիւր № 10.

այս սուրը ինձ հետ է, թոյլ չեմ տալ որ աղջկանդ մատի ծայրով անգամ դիպչեն։

Օրիորդը լսելով այդ խօսակցութիւնը՝ գլուխը մօր գրկից վերցրեց և դիւցազնի վրայ նայելով մօրն ասաց.

—Մայրիկ, ինձ լսիր. այժմ պարզ է, որ զուր էիր բարկանում հօրս վրայ. այն, ինչ որ Աստուածանից որոշած է՝ մենք չենք կարող շրջել։ Թուվելի է մեր բարեկամի ձգտումները, որ ուզում է իր սրով պաշտպանել ինձ, բայց պէտք է մտածել, որ նրա մահուան պատճառ չըղառնանք։ Ես վճռել եմ մեռնել։ Այս րոպէիս յունաց բանակը վրաս է նայում, և արշաւանքի ճակատագիրն իմ կեանքից կամ մահից է կախուած։ Մայրիկ, դու ծնել ես ինձ ոչ թէ միայն քեզ համար, այլ ամբողջ ազգի համար. թող ես զոհւեմ, միայն իմ հայրենակիցները ցրոյան առնեն։ Ապագայում ոչ մի օտարական չի յանգգնիլ մեր երկրից կին փախցնել և իմ անունն յաւիտեան ժողովուրդը օրհնելով կրկիշէ։ Երբ որ այսքան զօրականներ ոտքի կանգնած սուրերը մերկացրած վրէժ են խնդրում թշնամուց, մի՞թէ ինձ համար ամօթ չէ, որ արգելք լինեմ ամենքին և հայրենիքիս դժբախտութեան պատճառ դառնամ։ Ո՛չ, թող զոհւեմ հայրենիքիս որբութեան օգտին։ Ինձ զոհեցէք և թշնամուն յաղթեցէք։

—Ես մահկանացուների մէջ ամենաերջանիկն կըլինէի, ասաց Աքիլլէսն, եթէ աստուածները քեզ պէս մի կին պարգեւէին ինձ։ Ես հոգուս չափ սիրում եմ քեզ, տեսնելով քո այդ վեհ հոգին և բարձր ձգտումները։ Եթէ դուք կըհամաձայնւէք ինձ հետ, այս րոպէիս կըվերցնեմ քեզ և իմացիր, որ եթէ ամբողջ յոյները քո մահը ցանկանան՝ իմ այս բազուկները կազատեն քեզ։

Բայց Իֆիգենիան պատասխանեց.

—Ես չեմ ցանկանում, որ մի ուրիշը իմ պատճառով մեռնի. իմ տեղն եմ որ իմ մահով հայրենիքս ազատեմ։

Աքիլլէսը գարմացաւ օրիորդի դիւցազնական վեհութեան վրայ և ասաց.

—Ես ոչինչ չեմ կարող անել քո վճռի դէմ: Սակայն, մի բան եմ ուզում ասել. զօրականների հետ սեղանի մօտ ես կրկանգնեմ, հէնց որ սուրը վզիդ մօտենայ և դու իմ օգնութեան կարօտ լինես, նշան տուր ինձ:

Վերջապէս Իֆիգենիան հրաժեշտ առաւ իր մօրից և խնդրեց, որ իր մահուան պատճառով սուգ չանէ: Յետոյ պատւիրեց, որ տանեն սեղանի առաջ: Երբ նա հասաւ նախրական անտառի ծաղկաւէտ տեղը, յունաց բոլոր զօրքը նրա առաջ դուրս եկաւ: Ագամեմնոնը տեսնելով, որ աղջիկն անկախ և ուրախ սրտով գնում է դէպի զոհի սեղանը, երեսը ծածկեց և սկսեց լալ, որպէս դի իր աղջկայ մահը չըտեսնի: Բայց Իֆիգենիան, երբ հայրը մօտեցաւ, ասաց.

— Հայրիկ, մի սգար իմ պատճառով, ես սիրով անձս զոհում եմ այն հայրենիքին, որ տէր է իմ մարմնիս և սրտիս: Ես ուրախ սրտով զոհւում եմ հայրենեաց շահերին. աղաչում եմ աստուածներին, որ ներկայ պատերազմում շնորհէ ձեզ յաջողութիւն, որ յաղթանակով վերադառնաք: Այժմ թող ոչ ոք ինձ արգելք չըլինի, ես յօժար սրտով պարանոցս դնում եմ սրի տակ:

Բոլոր մարդիկ զարմանալով նայում էին հայրենիքի սիրոյ համար զոհւող օրիորդի վրայ: Հրապարակի վրայ տիրեց խորին լռութիւն: Կալքասը յառաջ եկաւ, սուրը պատեանից հանեց և դրաւ սեղանի վրայ: Յետոյ օրիորդի գլուխը թարմ ծաղիկներով պսակեց: Բոլոր զօրքը լուռ նայում էր այդ տխուր հանդէսին:

Ահա քրմապետի սուրը շողշողաց օրիորդի վզի վրայ: Բայց մի հնարով օրիորդը հանդիսականների աչքից անյայտացաւ: Ոչ ոք չիմացաւ թէ ո՞րտեղ նա թագնուեցաւ: Անահիտ դիցուհին կոյսի վեհանձնութիւնը տեսնելով, պատեց նրան ամպով, իսկ սեղանի վրայ օրիորդի փոխարէն ընկած էր արիւնով թաթախուած մի եղնիկ:

Ա. ԲԱՐՈՒԹՃԵԱՆ

Միջին-Ասիայում.—Միջնաբերդ

ՋԻՄԲԹ ՄԵՌԵԼԸ



Խռնչալներով լեցուն, պարարտ հողին տակ, —
Ես ինքս կ'ուզեմ փորել փոս մը խորունկ,
Ուր, ուզածիս պէս կրնամ փռել իմ հինոսկրո-
տիքս,
Ու քնանալ մոռացումին մէջ, ինչպէս շանա-
ձուկ մը ալիքին տակ։
Կտակները կ'ատեմ, կ'ատեմ գերեզմանները.
Մարդերէն արցունք մը պաղատելէն աւելի,
Ողջ, կ'ուզէի հրաւիրել ագռաւները,
Իմ աղտոտ մարմնիս ամեն մասերն արիւնելու։
Ո՜վ որդեր! առանց աչքի ու ականջի սեւ ընկերներս,
Ձեզի գալը տեսէք, ազատ ու զարթի մեռածի մը!
Փիլիսոփայ վայելողներ, գիտութեան զաւակներ,
Իմ աւերակներու մէջէն անցէք, առանց խղճահարութեան,
Ու ըսէք ինձի, թէ կայ տակաւին չարչարանք մը,
Այս ծերուկ մարմնին համար, առանց հոգիի, ու մեռած՝
մեռածներուն մէջ։

Թարգմ. Տ. ՍԼԿՈՒՆԻ ՊՈՏԼԷՐԻ

Գիտական գբօսանք

ՇՇԻ ՄԷՋ ՄԵՒ

Ընդհանրապէս շիշը բաւականին աչքի ընկնող դեր է կատարում այսպիսի փորձերում։

Մեր ընթերցողներին առաջարկում ենք վերցնել մի շիշ, լցնել ջրով, ամուր խցել խցանը վերևից, ծածկել մեղրամոմով, և ապա շշի մէջ դնել մատի երկարութիւն ունեցող մի մեխ, առանց շարժելու խցանը և առանց մի կաթիլ ջուր թափելու։

Հաղորդելով ձեզ մի փոքրիկ խորամանկութիւն, որ հարկաւոր է գործադրել նպատակին հասնելու համար, ես, ի հարկէ, կ'ոչնչացնեմ այն հետաքրքրութիւնը, որով դուք կը հետևէիք այդ փորձը կատարած ժամանակ, առանց լմանալու դրա գաղտնիքը. սակայն չէ որ, լմանալով դուք այդ, սիրելի ընթերցողները, հնարաւորութիւն կունենաք նոյն

փորձը անձամբ անելու։

Փորձի համար հարկաւոր է վերցնել մուխ գոյնի շիշ՝ հնար եղածին չափ յատակը խիստ ներս ընկած, և ուղղակի այդ յատակի մէջտեղում բանալ մի անցք ճիշտ այն մեծութեան՝ ինչ մեծութիւն որ ունի մեխը։ Այդ անցքը հարկաւոր է մեխի համար։ (Մեխի գլուխը պէտք է կոտրել, որպէսզի

անցքը չափազանց մեծ չըլինի)։ Անցք բանալը դժւար չէ. այդ բանի համար հարկաւոր է կլոր խարտոցիկի ծայրով խփել, և երբ որ, մի քանի զարկերից յետոյ, ընտրւած տեղում երևաց փոքրիկ անցք, այն ժամանակ այդ նոյն խարտոցիկի օգնութեամբ կարելի է անցքը ընդարձակելով հասնել ցանկալի մեծութեան։

Շատ կարելի է շատերին տարօրինակ թւայ այս և բացականչէ.

— Ի՞նչ, ինչ մի մեծ բան կայ շշում մեխ մտցնելու այդ զործողութեան ժամանակ։

Շշի մէջ ծակ անցկացնել և մէջը մտցնել մեխ,—այդ հօ երեխան էլ կարող է. վերջապէս ինչո՞վ է զանազանւում այս փորձը հասարակ ճոկուսից, դրանում ինչ մի գիտնական կամ խրատական բա՛ն կայ որ...

Սրան որպէս պատասխան կրյիշեցնեմ ձեզ,—շիշը չէ՞ որ լիքն է և փորձի պայմանումն էլ ասւած է «առանց մի կաթիլ ջուր թափելու»։

Երբ ծակը արդէն շինւած է լինում՝ շիշը դրւում է սեղանի վրայ ջրով լի,—հէնց այս բանի մէջ էլ կայանում է փորձի ողջ էութիւնը։ Ահա թէ ինչպէս պէտք է կարգադրել. նախ և առաջ՝ խցանով փակենք յատակում մեր բացած անցքը և շիշը լցնենք մինչև բերանը ջրով, ապա ուշադրութեամբ խցենք, և խցանի վերևը ծածկենք մեղրամոմով, այն ժամանակ ամենայն հանգստութեամբ կարող ենք բանալ ներքին անցքը, առանց երկիւղ ունենալու ջուրը դուրս թափւելուց, որովհետև այդ բանին արգելում է արտաքին օդի ճնշումը։ Ինքն բատինքեան պարզ է, որ հանդիսականներից ոչ ոք, տեսնելով շիշը մինչև բերանը ջրով լի, չէ կարող կասկածել շշի յատակումը գոյութիւն ունեցող անցքի մասին։ Այժմ արդէն հասկանալի է, որ դժւար չէ շնորհիւ յայտնի ճարպիկութեան՝ մեխ մտցնել անցքի մէջ և այդպիսով կատարել մեր առաջարկութիւնը։

Դ. Բ.

ՍՐԱԽՕՍ ԾԵՐՈՒԿԸ

—Ա՛յ Պետրոս, ա՛յ Պետրոս, տօ տնաճախակ, մի դէսը մտի՛կ արա, դէսը,—գոռալով կանչում էր տաւարած Սաքօն իր ընկեր Պետրոսին, որ բարձրացել էր սարի գլուխը: Պետրոսը Սաքօի ձայնը չէր լսում. իսկ նա կրկին շարունակեց.

—Ա՛յ Պետրոս, ադա՛ քեզ չեմ ասում, լսի՛ր, էյ Պետրոս:

Վերջապէս Պետրոսը յետ նայեց և տեսաւ իր ընկեր Սաքօին սարի տակ կանգնած:

—Ի՞նչ ա, պատասխանեց նա վերևից:

—Ադա, էլ ի՞նչ պտի ըլնի. շատ պառաւ մարդ էի տեսել, համա ըսէնց պառա՛ւ երազումս տեսած չեմ ըլնիլ, կեանքումս ո՛րդեան տեսած կըլնեմ, ասաց Սաքօն .իր ընկերոջը:

Նա զարմացած բերանը բաց էր արել ու ապշած մնացել, այդ սարի մէջով անցնող պառաւ մարդու վրայ: Խօսակցութեան ժամանակ, Համարեա երկու ընկերները մի՛մեանց մօտեցել էին և պառաւին մատնացոյց անելով ու մօտենալով՝ Հարցրին.

—Ա՛յ պառա՛ւ, էս դու լինչի չես մեռնում:

—Ի՞նչ անեմ, այ որդիս, պատասխանեց Ծերուհին. դնում եմ արքայութի՛ւն՝ չեն ընդունում. գնում եմ դժոխք, էնտեղ էլ տեղ չըկայ, դրա համար էլ մնացել եմ էստեղ. դրուստն ասեմ, որդիս, իմ էստեղ մնալս էլ պատի՛ժ ու մեղք է աշխարհիս համար:

—Ղորդ, ուզում ես դժոխք ղրկեմ, ասաց Սաքօն:

—Ա՛յ որդի, ես ուզում եմ որ Աստուած իր ձեռքովը տեղաւորի մի տեղ, թէ չէ մարդու ձեռովը խօմ կարող էի վաղուց էլ տեղաւորուել էնտեղ...

ԶՒԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

40) Առաջ. Ս. Սափարեանցի.

Ես ծընուում եմ արևի հետ
Եւ մեռանում նրանից յետ.
Սակայն կարող է լուսինն էլ
Կենդանութիւն ինձ պարգևել,
Ամեն իրի ես անբաժան
Մօտիկ ընկերն եմ մըշտական:
Կէսօրներին երեխայ եմ,
Ոտքերիդ տակ կրծառայեմ.
Առաւօտուն—մեծահասակ,
Երեկոյեան էլ նոյն տեսակ:
Թէ ինձանից փախչել ուզես՝
Մինչև մահըդ պէտք է վազես.
Բայց թէ բռնել ինձ կամենաս՝
Դատարկ ձեռքով միշտ կըմընաս:
Ո՛չ մեռած եմ, ոչ կենդան եմ.
Դէ, իմացէ՛ք՝ թէ ինչ բան եմ:

—

41) Առաջ. Նոյնի.

Հետևեալ նոյնահնչիւն ածականների դիմաց՝ դրէ՛ք պատշաճաւոր գոյականներ.

յարկաւոր—
յարկաւոր—

յարգաւոր—
յարգաւոր—
Հարկաւոր—
Հարկաւոր—

—

42) Առաջ. Տ. Բալթաճեանի.



Այս քառակուսիները մէջ դասաւորել 2 մ, 2 ն, 4 կ, 2 վ, 4 տ, 3 ա, 2 ն, 3 ի և 2 բ, այնպէս որ 1-ից ցած և 5-ից աջ կարդացւի արևմըտեան Եւրոպայի քաղաքներից մէկի անունը. 2-ից և 4-ից—հաւաքական գոյական անուն. 3-ից—որի վրայ ներկայացումներ է տրւում. 6-ից աջ և 8-ից ցած—դասական առարկայի անուն. իսկ 7-ից և 9-ից—ծովային կենդանիներից մէկի անունը:

—

43) Առաջ. Խ. Ջահմագեանի.

Կլոր շրջան է չորս մասի բաժնած,
Ամեն մի մասը ջոկ անուն ունի.
Եւ ամեն մասը երեքի կիսած
Անիւի նման պտոյտ են գալիս:

44) Առաջ. Ֆ. Հաբուռեանցի.

Մի բառ եմ ես երկվանկանի,
Ինձ պէս կեանք ոչ ոք չունի.
Թէ մեծատան, թէ աղքատի՝
Ես կըգտնւիմ սուփրի միջին։
Սիրով նայում են ինձ ամենքը,
Եւ հաճութեամբ անուշ անում,
Նամանաւանդ երեխէքը
Հացի ինձնից, բան չեն ուտում։
Ուտելիք եմ դորճածական,
Գիւղի տան մէջ ես պատրաստւած,
Ա՛յ ընթերցող, դու մշտական,
Իմացիր ինչ է իմ ասած։

Նախընթաց № 10 հանելուկների բացատրութիւնը. 36) Մինչ—ի նման է—Նունուֆար—Անգլիա—Սւէդ, Մինաս Չէրազ։ 37) Ծոթանասուն թիւը. 38) Ադամը՝ Եւային. 39) Մուկ։

Աղբիւրի անցեալ համարում 35-րդ թւաբանական խնդրի բացատրութիւնը դիտմամբ սխալ էինք տպագրել, փորձելու համար, թէ որքան են հետաքրքրւում մեր ընթերցողները հանելուկներով։ Ամեն տեղից բացատրութիւններ տեղացին, թէ սխալ է բացատրութիւնը։ Յայտնում ենք, որ 60 կոպէկի փոխարէն՝ պէտք է լինէր 50 կոպէկ։

Խմբագիր-հրատարակիչ՝ **ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ**

Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.
Дозволено цензурою. Тифлисъ, 3-го декабря 1897 года.

XIV ГОДЪ ИЗДАНІЯ 1898 г.

НОВЬ

XIV ГОДЪ ИЗДАНІЯ 1898 г.

иллюстрированный двухнедѣльный вѣстникъ современной жизни, политики, литературы, науки, искусства и прикладныхъ знаній.

за 14 рублей

безъ всякой доплаты за пересылку премій, *подписчики «НОВИ»* получаютъ въ 1898 году, съ доставкою и пересылкою во всѣ мѣста Россійской Имперіи, слѣдующей шесть изданій.

1). ЖУРНАЛЪ **НОВЬ** 24 выпуска въ форматѣ наибольшихъ европейскихъ иллюстрацій.	2) особый иллюстрированный отдѣлъ **МОЗАИКА** (24 выпуска) составляющій какъ бы самостоятельный журналъ по прикладнымъ знаніямъ, вмѣщающій въ себѣ 16 рубрикъ.	3) журналъ ЛИТЕРАТУРНЫЕ **СЕМЕЙНЫЕ ВЕЧЕРА** (отдѣлъ для семейн. чтенія) 12 ежемѣсячныхъ книжекъ романовъ и повѣстей.
4) **ВОСЕМЬ** переплетенныхъ томовъ полнаго собранія сочиненій П. И. МЕЛЬНИКОВА. (Андрея Печерскаго)	5) **ЧЕТЫРЕ** переплетенные тома полнаго собранія сочиненій **ВЛ. ИВ. ДАЛЯ** (Казака Луганскаго)	6) **ДВѢ РОСКОШНО** переплетенныя книги формата in-folio, *„Живописной Россіи“*, посвященныя описанію **МОСКВЫ** и Москов. промышлен. обл.

XIV (1898) ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧАЛСЯ СЪ 1 НОЯБРЯ 1897 Г.

ГОДОВАЯ ПОДПИСНАЯ ЦѢНА за всѣ вышеобъявленныя изданія вмѣстѣ съ пересылкою во всѣ мѣста Россійской Имперіи, безъ всякой доплаты за перес. и дост. безплатныхъ премій. За границу—24 рубля. **14 РУБ.**

Разсрочка платежи допускается, при чемъ при подпискѣ должно быть внесено не менѣе 2 руб; остальныя же деньги могутъ высылаться по усмотрѣнію подписчика ежемѣсячно, до уплаты всѣхъ 14 руб. При подпискѣ въ разсрочку безплатныя преміи высылаются только по уплатѣ всей подписной суммы.

КЪ СВѢДѢНІЮ Г.Г. НОВЫХЪ ПОДПИСЧИКОВЪ НЕ ПОЛУЧАВШИХЪ «НОВИ» ВЪ 1897 ГОДУ.

Лица, не состоявшія подписчиками «НОВИ» въ 1897 году и не имѣющія еще первой половины СОЧИНЕНІЙ АНДРЕЯ ПЕЧЕРСКАГО и первой половины СОЧИНЕНІЙ В. И. ДАЛЯ, могутъ, подписываясь на «НОВЬ» въ 1898 году, получить первые шесть томовъ (т. е. томы по 6) сочиненій А. Печерскаго и первые шесть томовъ (т. е. томы 1 по 6) сочиненій В. И. Даля, вмѣсто томовъ, выдаваемыхъ въ 1898 году прежнимъ подписчикамъ. Вторая же половина сочиненій, какъ А. Печерскаго, такъ и В. И. Даля, будетъ выдана этимъ новымъ подписчикамъ въ 1899 году, въ чемъ редакція теперь же и принимаетъ передъ ними обязательство.

Новые подписчики на «НОВЬ» 1898 года, т. е. лица не бывшія подписчиками на журналъ въ минувшемъ 1897 г., при уплатѣ за 1898 г. 26-ти рублей, вмѣсто 14-ти руб., могутъ получить въ 1898 г. **всѣ 14 томовъ полнаго собранія сочиненій Андрея Печерскаго и всѣ 10 томовъ полнаго собранія сочиненій В. И. Даля.**

а также и тѣ двѣ переплетенныя книги „Живописной Россіи“, которыя выдавались подписчикамъ въ 1897 г.; значитъ, вмѣсто 2 книгъ „Живописной Россіи“ они получатъ 4 переп. книги этого изд. и, 12 т. соч. А. Печерскаго и В. И. Даля, 24 т.

Բացւած է 1898 թ. բաժանորդագրութիւնը

IX ՏԱՐԱԶ IX

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

Կրիւ տարուկէս նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ աշխատակիցների մասնակցութեամբ:

Տարազը լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1-2 թերթ.

Ծ Ր Ա Գ Ի Ր

Գեղարուեստ եւ գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, քառրոնական պատմքներ: Հանրաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային, արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկած: Երաժշտութիւն եւ թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Ցօղուածներ եւ այլն: Փելիետօն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատ եւ այլ խաղեր, Բերաւս: Չարջեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ:

Հեռու առօրեայ, աշխարհային ինտրիգներից, նեղլուսած գեղեցկին և ճշմարտին՝ հայ գրական անդաստանում ՏԱՐԱԶԸ մեծ պարտք և դեր ունի կատարելու... ՏԱՐԱԶԸ հասունացած հայ պատանիների, երիտասարդների և նոյն իսկ ծերերի թէ զբօսոյն է, թէ թախծալից ժամերին նրանց բարեկամը:

Առաջիկայ 1898 թ. կրասպագրուեն **Տարազում** ի միջի այլոց **Էմիլ Զոլայի** նշանաւոր վէպը որ լոյս չրտեսած այնքան մեծ աղմուկ է հանել աշխարհիս բոլոր գրական աշխարհում և միաժամանակ բնագրի հետ տպագրւում է եւրոպական բոլոր լեզուներով: Բացի այդ կը տպագրուեն մի շարք վէպեր և պօէմաներ, որոնց թւում է

ՊԱՐԻԶ ԵՒ ՓԱՓԱՅ

շատ մեծ վէպ, **Բագւոյ բուրժուազիայի, գործարանատէրների եւ Բալախանի գործաւորների կեանքից:**

Ք. ԳՐԱՆՏ ԳԱԳՏՆԻՔԸ վէպ կ. Պոլսի սուլթանների կեանքից: Քաղաքական և ներքին աշխարհ Տաճկաստանի, ազգային սահմանադրութիւն: Ընկերներ, վէպերներ, հոգեւորականութիւն և ժողովուրդ:

ՏԱՐԱԶԻ *պրեմիան—***ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** *մի մեծադիր խրոմօ է, սքանչելի պատկերը, պատրաստւած Բերսպայի ամենանշանաւոր գործարանում, փառաւոր զարդ հայի դահլիճին:*

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 **ԲՈՒԽ. ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** պրեմիայով **եօթը** ր. (առաստաւմամբ **10** ր. կամ 30 ֆր.):

Պրէմիան կ'ուղարկւի բաժանորդներին Տարազի յունւարի №-ի հետ:
Իւրաքանչիւր պրեմիան առանձին արժէ 3 ր.: Ադրիւր-Տարազ *միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, երկու պրեմիաների ձանապարհածախս պետք է վճարի միայն մէկ րուբլի:*
Հասցէ՝ **ТИФЛИСЪ** редакція илюст. жур. **ТАРАЗЪ** կամ Tiflis (Caucase) Réd. de jour. Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Բացւած է 1898 թ. բաժանորդագրութիւնը

Պատկերազարդ

ԱՂԲԻՒՐ

ամսագրի

կրիտասարակի նոյն ուղղութեամբ, ծրագրով, դիրքով եւ աշխատակիցների մասնակցութեամբ

Առաջիկայ 1898 թ. Աղբիւրի *պրեմիան՝* մի շատ շքեղ **ԱԼԲՈՄ** է, Աղբիւրից չորս անգամ մեծ ձեւքով, 24 գոյնզգոյն բուն գեղարւեստական նկարներով, *(Սեմիրադսկու, Տալիանի, Զիխելի, Վերեշչագինի, Մակարդի, Բրէնդամուրի, Շմիդտի եւ այլն)*, որի նմանը մինչեւ այսօր չենք ընծայաբերել մեր բաժանորդներին։

Այն ծնողը, որի համար թանգ է իր զաւակի մայրենի լեզուով թոթովելը, թողնասպարէս ԱՂԲԻՒՐԻՆ թէ ինքը քաժանորդ գրւի եւ թէ տարածի հայրենական բոլոր խաւերում։

ԱՂԲԻՒՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ազգային մեծ գործի մէջ բարի նախանձախնդրութեան անվիճելի ապացոյց է Աղբիւրի հանդէպ հայ երեխաների ցուցաբերած սէրն ու վերաբերմունքը։ Ամէն տարի Աղբիւրի բաժանորդների թիւը աճում է, եւ այդ մասնաւոր ուշադրութեան արդիւնքն է, որ Աղբիւրը ամէն տարի աւելի ու աւելի է դառնում հայ մանուկների սիրելի ընթերցանութիւնը։

Աղբիւրի մէջ կրտպագրւեն տրամանգիչ - գաստիարակիչ մանկական վէպ և մի շարք պատմական պօէմաներ. ինչպէս նաեւ բաժին քնդրի- կական մասը կրկազմէ։

ԼԷՕՆ ԿԱՅՍՐ

Մանուկ հասակին ընթերցանելի հէքեաթներն ու զրոյցները ընտրւում են շատ մեծ խնամքով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը **3** ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆր.), պրէմիայով 4 ր. Պրէմիան կ'ուղարկւի յունւարի №-ի հետ։

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. «Агбюръ», Tiflis, (Caucase) Réd. de la revue «Agbür».

ԱՂԲԻՒՐ № 12.

«Ընազանդի». (պատկեր)։ Երգ (Չէլլիից). Մ. Մ.։ Տանիլները տօնը (Ալֆոնս Դոդէի). Ս. Չխեանց։ Ապագայ պապիկ եւ տատիկ. (պատկեր)։ Պանդուխտ (ոտանաւոր). Անդրանիկ։ Որսկան Եղին. Ջ. Տէր-Գրիգորեան։ Վարազների որս. (պատկեր)։ Վարդ եւ Մանուշակ. (արձակ բանաստեղծութիւն). Պետ. Մոճուեանց։ Մանուկ (ոտանաւոր). օր. Սաթինիկ Փոյեաճեան։ Մայրը (Վիկ. Հիւգոյից). Գ. Բաբուրեանց։ Ճանապարհորդները եւ քաղցած գայլերը. (պատկեր)։ Վահանը եւ Մարիամը (վերջ). Թարգմ. Խ. Չահմազեան։

Գիտական գրօսանք

Բնական գրիչ (պատկերով). Գ. Բ.։

Զուարճալիք

Մտքումդ մի թիւ վեր առ, ես գտնեմ։ Ա. Չահ-Մուրադեանց։ Հանելուկներ։

Յայտարարութիւններ։

Խմբագրութիւնից

Աղբիւրի 1898 թ. № 1-ը լոյս կըտեսնի Զրօրհնէքից յետոյ և կուղարկուի պրէմիայի հետ միմիայն նրանց, որոնք արդէն վերանորոգած կլինեն իրանց բաժանորդագրութիւնը։

Տարազի №-ը լոյս կըտեսնի Նոր-Տարու օրը։ Մեր թերթերի ընդարձակ շրջաններում տարածուելը կընպաստէ և Աղբիւր-Տարազի աւելի ճոխ հրատարակուելուն։

Խնդրում ենք մեր մշտական բաժանորդներին, որոնք խոստովանում են Աղբիւր-Տարազի անհրաժեշտութիւնը, աջակցել խմբագրութեանս, ընտանիքներում տարածելով մեր հանդէսները։

Աղբիւր-Տարազ հանդէսները ոչ մի կուսակցութեան չեն պատկանում։ Մեր դրօշակը գիտութեան եւ ճշմարտի գաղափարներն են ծածանեցնում։ Հայ մանուկին ոչ մի ծնող չի կարող այս տօներին աւելի օգտակար և շքեղ ընծայ տալ, որ կարող լինի Աղբիւրին փոխարինել։

«Հնդիկը»